

Հայ գիրերու գիւտին 1500-ամեակը և տպագրութեան 400-ամեակը փառաւոր հանդէսներով տօնուեցաւ տեղաւ

Կարգադիր մասնախումբը, ատենապետութեամբ Օսմանեան բանքայի տնօրէն Խաչատուր Գրապիրեանի և անխոնջ ջանիք ատենադպիր և դպրոցին հոգաբարձու Կարապետ Տէր-Արրահամեանի, ոչինչ չէր խնայած հանդէսը փայլուն և տպաւորիչ ընելու համար:

Նշանակալից էր մերսինցի տիկնանց մասնակցութիւնը հանդէսին: Իրենցմէ ալ եղան բանախօսներ: Գրապիրեանը հայ գրոց կազմութեան մասին բանախօսութիւն մը ըրաւ, տեղույս դպրոցաց տնօրէն Մոսթէ Արմէն հայ գրականութեան մասին խօսեցաւ յետ Մերսոպայ, և Միացեալի Կիլիկիոյ վարժարանաց ընդհանուր տեսուչ Միք. Նաթանեան ևս հայ ազգի ծագման, լեզուին, քաղաքակրթութեան և գրականութեան մասին՝ նախ քան հայ գիրերուն գիւտը:

Հանդէսներուն պաշտօնապէս մասնակցեցան տեղույս բողոքական հայերը, բայց հայ-կաթողիկէները միայն անհատներ ներկայ եղան:

Ի նպաստ դպրոցական համազգային ֆօնդի բացուած հանգանակութիւնը, երկու օրուան մէջ, առաւ երեք հարիւր յիսուն ոսկիի չափ, ինչ որ բան մըն է Մերսինի փոքրիկ գաղթականութեան համար:

Վեհափառ կաթողիկոսը սոյն հանդէսը տօնեց Դէօրթ-Նօլի մէջ մասնակցութեամբ ազգային վարժարանին և Բելեկեան որբանոցին:

Ոգևորութեամբ տօնուած է նաև Հաջընի մէջ, Միացեալին նախաձեռնութեամբ: Հաջընի առաջնորդը, Պետրոս Սարահեան վարդապետը, արտասահմանէն նոր դարձած, հանդէսին Մերսինի մէջ նախագահեց:

Ձեյթունի մէջ ևս Միացեալի վարչութեան միջոցաւ հանդէսներ եղած են, բայց կաթողիկոսական փոխանորդ Գարանֆիլեան վարդապետին անձա՛ր միջամտութեամբը խանգարուած և կէս մնացած է:

Այսպէս և ամեն կողմ մեծ ու փոքր բաներ մը եղած են, ի բաց առեալ... Ադանան, որ իր փառաւոր մեքելութիւնը ցուցաբերած է օրուան տօներուն հանդէպ անտարբերութեամբ մը, որ նոյնիսկ Ադանան կը խորհրդանիչէ, այլասերուած և ինկած Կիլիկիոյ հայութեան այդ Բաբելոնը:

Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսն իր ճամբորդութենէն դառնալով Սիւս գացած է:

Ինչպէս ըսի, Հաջընի առաջնորդն ևս, որ իր հիւանդութիւնը դարձանելու համար դուրսերը գացած էր, դէպի իր աթոռը մեկնեցաւ:

II Հաջըն, 27 հոկտ.

Ինչպէս թիւքահայ բոլոր կեդրոնները, Հաջըն ալ վերջին օրեր ս. Սահակի և Մեսրոպի յօբելեանին ձեռնարկեց, թէև քիչ մը ուշ:

Ըստ հայրապետական կօնդակի, ամսոյս 13-ին սկսան յօբելեանական հանդէսները ղեկավարութեամբ Միացեալի պաշտօնէտութեան: Նախատօնակի արարողութիւններէն առաջ՝ երկու եկեղեցեաց զանգակները սկսան անընդհատ 1/2 ժամ ղողանջել, վարժարանաց աշակերտութիւնը առաջնորդուեցաւ ս. Աստուածածնոյ եկեղեցին:

Շարաթ օր, հոկտ. 13-ին, քաղաքիս բոլոր վարժարանները փակ էին: Կրթական հաստատութիւնք և եկեղեցիները դրօշակազարդուած էին. աշակերտական ուրախութիւնը անսահման էր. իւրաքանչիւր վարժարանի իւրաքանչիւր դասարանի աշակերտութիւնը կը մրցակցէր իրարու հետ աւելի փառաւոր և աւելի գեղազարդ ըլլալու համար: Առաւօտեան և երեկոյեան տեղի ունեցան ժամերգութիւնք սովորականէն շատ աւելի խոռոներամն բազմութեան մը ներկայութեան: Օրուան վեհութեան համապատասխան ժամերգութիւնք կատարուեցան. շուկան գոցուած էր և օրուան խօսակցութեան նիւթը՝ համազգային յօբելեանը:

Գիշերը վարժարաններէն, եկեղեցիներէն գալիս բոլոր աշակերտաց տունները լուսազարդուած էին. Միացեալի երգեցիկ խմբի և նուագածուաց առաջնորդութեամբ, ջահերով և լուսավառութեամբ, երգով և նուագարանով, քահանայից դասին առաջնորդութեամբ երեք ճիւղի բաժնուած թափօր շրջեցաւ ամեն կողմը. եկեղեցիներու և վարժարանաց առջև խանդավառ ցոյցեր և ճառախօսութիւններ կը ըլլային: Փողոցները հազարաւոր և բիւրուոր ծովածաւալ բազմութեան անբաւական և անանցանելի դարձած էր:

Անդուսպ և անխառն ուրախութիւն մը բոցավառած էր ժողովուրդը. մեծ ու պըղտիկ, ծեր և երիտասարդ, դպրոցականն ու դատարկապարտը, աղան ու հովիւը առանց դասակարգային խտրութեան ամեն մարդ ներկայ էր. մինչև կէս գիշեր օրը կը թընդար. ոչ ոք չկուզէր զատուիլ. լուսավառութիւնները և հրախաղիւթիւնը ելէքնարականացուցած էին ազգը, մասնաւանդ դպրոցականութիւնը:

Կիրակի առաւօտ շատ կանուխէն սկսան զանգակահարութիւնք. քաղաքին երեք եկեղեցիները միացած էին: Կէսօրէն վերջ ս. Գէորգայ եկեղեցույս մէջ տեղի ունեցաւ յօբելեանական պաշտօնական հանդէսը, նախազանութեամբ առաջ. փոխանորդ Վահան ք. Մանուկեանի և տեղակալ Գառնիկ էֆ. ի. Ահագին եկեղեցին անբաւական եկաւ գունդագունդ հասնող երկսեռ բազմութեան. ներկայ էին բացի ուսուցչական կազմէն՝ քաղաքիս պաշտօնական մարմինները, աղայական դասակարգը առանց յարանունական խտրութեան: Ծառախօսութիւններ եղան «հայ լեզուի և գրոց գիւտի», «Սահակ Մերսոպի», «Ծ. դարու գիւտին կրօնքի ազդեցութեան», «հայութեան զգացման», «յօբելեանի բարոյական նշանակութեան վրայ», Միացեալի տնօրէնութեան, Աղզա՛նուէրի վարժարանին, հայ-բողոքականութեան կողմէ, մելանուշ երգերով ընհատուած: Ձեռնարկուեցաւ դպրոցական ֆօնդի ևս, սակայն կաթողիկ վարդապետին անքաղաքավար ընթացքով՝ ամեն ինչ խափանեցաւ: Ծաւ է ըսել որ՝ որքան հայ բողոքականք մերձաւորութիւն ցոյց կուտան իրենց լուսաւորչական եղբայրներուն, մինչև պատրիարքարանի միացած առաջաւոր խմբակին, նոյնքան և աւելի կրօնական ծթած գաղափարներով տոգորուած կաթողիկ հասարակութիւնը խոյս կուտայ եղբայրական ձեռնուութեանէ: Կարծէ յիշել, որ տեղույս կաթողիկ առաջնորդը յօբելեանական յանձնախմբին հրաւերը կօշտ պատասխանով մը մերժած էր և երբէք չմասնակցեցաւ ազգային մեծ տօնի փառաւորութեանց: Լ.՝ Ժ.

դասերով և մեր հերոսների միաժամանակ
անկումը ու այդ անկմամբ առաջացած
վիշտն ու ցասումը ցոյց տուին, որ ընդ-
հանուր վշտակցութեան ժամանակ մահը
կորցնում է իր սրութիւնը և «փոխվում է
խնդակցութեան», ինչպէս գեղեցիկ բնորո-
շել է վրացական առածը: Եւ մենք այսօր
խնդալու մի մեծ երևոյթ ունենք. այդ
սուր կրքերի նահանջն ու չքանալն է և
վշտակցութեան համերաշխութիւնը:

Իսկ եթէ մենք համերաշխ վշտանալ և
ցաւակցել գիտենք, կը նշանակէ, որ կը կա-
րողանանք և համերաշխ գործակցել, կարող
ենք և պէտք է համերաշխ գործենք, որով-
հետև «գուգութիւնն է մայր բարեաց, ան-
գուգութիւն՝ մայր չարեաց»:

Սեւ բոլորիս համար պէտք է սև լինի,
սպիտակը սպիտակ: Եւ ես առաջարկում եմ,
որպէս ապացոյց մեր համերաշխութեան,
մեր կեանքի նոր դարագլխի, ընդհանուր
հանգանակութիւն բանալ մեր այդ երեք
գործիչներին մի ընդհանուր, «համերաշխու-
թեան» արձան կանգնեցնել: Այդ համերաշ-
խութեան արձանի վրա ես կառաջարկէի
կերտել երեք սիրած դէմքեր, մի գութա-
նի լծված, Մասիսի ստորոտը հերկելիս,
հայրենի հողի կուրծքը մշակելիս: Այդ ար-
ձանը թող լինի «միութեան և համերաշ-
խութեան արձան»: Թող նա երեք սիրած
դէմքերի անունից դաս տայ ասպարէզում
մնացող կենդանի գործիչներին համերաշ-
խութիւն, անդաւաճան սէր դէպի իրանց
գաղափարն ու գծած նախատակը և աննկուն,
եռանդուն գործունէութիւն:

Իսկ կը լինի գեղեցիկ յուշարձան մեր
կեանքի նոր դարագլխի, նոր համերաշխ և
միացած գործունէութեան, և այդ է պահան-
ջում մեզանից մեր յետամնաց զիւղը, բազ-
մակարօտ հայ ժողովուրդը և մեր բազմա-
շարժար, հիւժված հայրենի աշխարհը:

Գ. Մուրադեան